

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-7-4-Ա

ք. Երևան

03.12.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի դեկտեմբերի 3-ի նիստում քննարկեց 2014 թվականի սեպտեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Ֆիանթիս, ՍԵ ընկերության (Vinohradska 2029/124, 130 00 Praha, Czech Republic CZ) ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «ПЕНОКАЛ PENOXAL» (հայտ №20131193) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 106-րդ կետի 5-րդ մասի, 107-րդ կետի 4-րդ մասերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթություն է առաջացնում հայտի ներկայացման թվականի դրությամբ «ՄԵԴՊՐՈԳՐԵՍ» ՍՊԸ-ի կողմից օգտագործվող «ПЕНОКАЛ» և «ПЕНОКАЛ ВГ» ապրանքային նշանների նկատմամբ, որոնց մասին տեղեկատվությունը դրված է (<http://www.bimedical.cz/>, <http://inhibol.cz/o-nas/> և <http://www.penoxal-bg.am/>) չեխական ինտերնետային կայքերում և որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու և վկայագիր տալու մասին, քանի որ բողոքարկող ընկերությունը երկար ժամանակ է «ПЕНОКСАЛ PENOXAL» անվանումով մակնշված ապրանքն, ավելի վաղ քան «Մեդպրոգրես» ՍՊԸ-ն, ներմուծում է Հայաստանի Հանրապետություն իր մասնաճյուղի՝ «Մեդիկորես» ՍՊԸ-ի միջոցով և դրված է շրջանառության մեջ: Հետևաբար բողոքարկող ընկերության կողմից ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացնելը չի կարող դիտվել որպես անբարեխիղճ գործողություն և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները տվյալ դեպքում կիրառելի չեն:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքարկողի ներկայացուցիչ արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «ПЕНОКСАЛ PENOXAL» (հայտ №20131193) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել և գրանցման վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ